

– Քանի մը քայլ մնաց, եւ ես լուսէն կը վախեմ, որ Իսմայէլի գաւկըները չիմանան:

– Ես հազիւ թէ գթեզ կը տեսնեմ, որ առջեւս կը քայլես, այդ անօրէնները ինչպէս գթեզ կրնան տեսնել:

Իսկ Յովնան Է՛լ պատասխան չի տուաւ, այլ սկսաւ քայլերը երագել վասնզի երեւակայեց թէ Գուրգէն բռնուած լինելով բուքի եւ այդ վիճակի մէջ ուրիշ ճար չի գտնելով ձիերը իրարու քով շարած վրանին ծածկոցով ծածկելով տաղաւար մը շինած էին ձիւնին տակ, որ ձիոց եւ իրենց շնչով զիրենք անվնաս պահած էին մինչեւ նոյն վայրկեան եւ ըստ բաւականին ալ ուրախ: Իսկ հիմա աղատելով այն բանտէն բնական էր թէ հետեւէին այն խումբին, որ կ'երթար հայ ազգին եւ կրօնին թշնամեաց դեմ:

Վերջապէս Յովնանու աչքերը նշմարեցին Մշոյ բարձրաբերձ եկեղեցուոյ գմբէթը, որ քաղքին մէջ շինած էր Բագարատ իշխանը, ուստի կանգնեցաւ եւ երբ զօրքը շուրջ բոլորեցան, երեք խումբի բաժնեց գանոնք. մէկ մասը, որուն ինք առաջնորդ կեցաւ՝ քաղքին հարաւային կողմէն պիտի մտնէր, մէկը արեւելեան կողմը պիտի շրջեր, իսկ միւսը՝ դէպ արեւմտեան հիւսիս: Եւ այսպէս երեք խումբերն աչ յարձակեցան, մտան քաղաք: Երբ սասնցուոց աղաղակը գոռաց քաղքին մէջ, երբ արաբք յիմարացան անխուսափելի վտանգը հասած տեսնելով եւ իրենց թշուառութեան ձայնը ձգեցին, երբ գերիները, որ նոցայ խիստ ծառայութեան դատապարտուած էին ջուր եւ փայտ կրելու համար, ազատութեան եւ ուրախութեան ձայն բարձրացուցին, Իւսուֆ ոստիկանը, որդի Ապուսէթի, որ Բագարատայ պալատին մէջ երջանկաբար ցուրտէն լաւ պատսպարեալ փետրայարդար անկողնուց եւ բարձից տաքուկ հանգստութիւն կը վայելէր, տայս խառնաշփոթ ժխօրէն ընդօստուցեալ՝ շուարեցաւ, մնաց, կը հարցնէր կուզեր իմանալ թէ ի՞նչ էր պատճառը: Երբ իրեն իմացուցին թէ «գազանաբարոյ եւ արիւնարբու» լեռնցիք քաղաքը պաշարէր ներս են մտեր, շփոթութենէն թողուց պալատը, փախաւ, վազեց մտաւ Փրկչի